555

1. Տե՛ր, մենք կանգնած ենք բազմության մեջ
Ամեն ցեղից, ամեն լեզվից,
Քո ժողովուրդն ենք՝ գնված Քո արյամբ,
Ազատ մահից Քո սիրով:
Չկան բառեր, որ հայտնեմ Քեզ իմ գոհությունը,
Չկան բառեր, որ Քեզ փառաբանեմ:
Բայց ես իմ ձայնը կվերցնեմ,
Սրտանց կերգեմ ամբողջ իմ ուժով:
    Ալելուիա՛, ալելուիա՛, ալելուիա՛ սուրբ Գառին,
    Ալելուիա՛, ալելուիա՛, մենք գնված ենք Քո արյամբ,
    Ամեն լեզու, ամեն երկիր և ամեն մարդ թող ասի՝
    Փառք, գոհություն մատուցենք Աստծո Գառին, ամեն:

2. Տե՛ր, առջևդ կանգնած ենք Քո շնորհքով,
Սրբված ենք մենք Գառան արյամբ,
Կանչել ես մեզ, դարձրել զավակներդ,
Աղոթում ենք անունովդ:
Զորությամբդ գործի՛ր մեր մեջ ու մեզանով,
Մինչև փոխվենք ու Քեզ նմանվենք,
Ու թող ազգերը տեսնեն՝ փառքդ հայտնվեց, ու Քեզ պաշտեն:
վերջում՝
    Ամեն ծունկ թող ծռի,
    Ամեն լեզու թող դավանի, որ Դու ես Տեր: